# 517 Ո՞վ է, որ մեզ միշտ հսկում է

1. Ո՞վ է, որ մեզ միշտ հսկում է
Հայրական սիրով,
Ո՞վ է, որ միշտ խրատում է
Իր Հոգու ձայնով:
Ներում է մեզ, երբ զղջում ենք,
Մխիթարում, երբ տխրում ենք:
Սեր է Նա (2) անսահման,
Ո՞վ է, ո՞վ է Նա:

Էմմանուել, Էմմանուելն է Նա՝
Աստված մեզ հետ է հավիտյան,
Փրկությունը՝ հոգիների կորուսյալ:
Ծնվեց խոստացյալ Մանուկը այն,
Որ Աստված մեզ հետ լինի հավիտյան,
Հոգիներիս, աչքերիս լույս լինի:

2. «Ողջույն քեզ, իմ լա՛վ բարեկամ,
Ես քեզ հետ եմ, կա՛մ,
Ճանաչի՛ր Իմ մահով գնված
Փրկության ճամփան:
Ձեռքդ տո՛ւր Ինձ, ի՛մ բարեկամ,
Հիշի՛ր, որ Ես եմ հավիտյան
Քո միակ Փրկիչն, Փրկիչն ու Տերը,
Նայիր՝ ով եմ Ես»: